37, Vardanants 7, Yerevan, 0010, RA
(374 12) 880 330, (374 41) 088 033
info@wiselaw.am

WISE LAW FIRM

Քննարկվող փոփոխությունները նախատեսված են «Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 4-ի N 1268-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի մայիսի 22-ի N 610-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումների նախագծերով, և հիմնականում վերաբերում են նոր՝ աշխատանքային մուտքի վիզայի ներդրմանը և դրա տրամադրման կարգին:

Նախատեսվում է սահմանել աշխատանքային մուտքի վիզայի առանձին տեսակ, իսկ աշխատանքային գործունեությունը այլևս չի դիտարկվի որպես սովորական այցելության մուտքի վիզայի նպատակ:

Աշխատանքային մուտքի վիզա ստանալու համար հրավեր չի պահանջվի: Օտարերկրացին պետք է ներկայացնի Հայաստանում գործող գործատուի պարտավորագիր՝ մինչև 120 օր կարճաժամկետ աշխատանք կատարելու վերաբերյալ: Այս պահանջը չի կիրառվի այն անձանց նկատմամբ, որոնք արդեն ունեն աշխատանքի հիմքով ժամանակավոր կացության կարգավիճակ:

Աշխատանքային մուտքի վիզան տրամադրելու է ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը՝ հատուկ էլեկտրոնային համակարգի միջոցով:

Կարևոր փոփոխություններից է նաև այն, որ այն երկրների քաղաքացիները, որոնք սովորաբար Հայաստան կարող են մուտքի վիզա ստանալ միայն հրավերի հիման վրա և դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսության միջոցով, աշխատանքային մուտքի վիզայի դեպքում այս սահմանափակմանը չեն ենթարկվի:

Աշխատանքային մուտքի վիզայի կոդը կլինի Գ/W-1: Այն կարող է տրամադրվել մեկանգամյա կամ բազմակի մուտքի համար և հնարավորություն կտա Հայաստանում գտնվել մինչև 120 օր: Վիզայի ժամկետը երկարաձգել հնարավոր չի լինի:

Նախատեսվում է նաև, որ աշխատանքի հիմքով ժամանակավոր կացության կարգավիճակ ստացած անձինք միասնական էլեկտրոնային հարթակից ավտոմատ կերպով կուղղորդվեն աշխատանքային մուտքի վիզայի համակարգ՝ դիմում ներկայացնելու համար: Այս դեպքում ստուգվելու է անձի կողմից մուտքագրված տվյալների համապատասխանությունը, իսկ փաստաթղթերի բովանդակությունը և այցելության նպատակի հիմնավորվածությունը կրկին չեն գնահատվի:

Նախագծով սահմանվում է, որ ՀՀ-ում այլ տեսակի վիզայով գտնվող օտարերկրացին կարող է փոխել իր վիզայի տեսակը և նպատակը՝ բացառապես աշխատանքային մուտքի վիզա ստանալու նպատակով, եթե դիմում է «Օտարերկրացիների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով սահմանված հիմքով՝ աշխատանքի հիմքով ժամանակավոր կացության կարգավիճակ ստանալու համար:

Վիզայի փոփոխությունը կատարվելու է էլեկտրոնային եղանակով։ Գործող վիզան կդադարի գործել, իսկ նոր աշխատանքային մուտքի վիզան կտրամադրվի նախկին վիզայի մնացած վավերականության ժամկետով, սակայն ոչ ավելի, քան 120 օրով։

Այս գործընթացում ավտոմատ կերպով կստուգվեն անձնագրային տվյալները, իսկ ներկայացված փաստաթղթերի բովանդակությունը և աշխատանքային նպատակի հիմնավորվածությունը լրացուցիչ չեն գնահատվի։

Միաժամանակ նախատեսվում է հստակեցնել, որ ՀՀ կառավարության N 610-Ն որոշմամբ սահմանված առանց մուտքի վիզայի ռեժիմը չի կիրառվի աշխատանքային մուտքի վիզա ստանալու հետ կապված հարաբերությունների նկատմամբ։

«Օտարերկրացիների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը

Նախագծով նախատեսվում է «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքը լրացնել նոր՝ 29.4-րդ հոդվածով, որով կսահմանվեն ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու հիմքով ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ տրամադրելու պայմանները։

Նախատեսվում է, որ Հայաստանի Հանրապետությունում օտարերկրացին կարող է ստանալ ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու հիմքով։

Այս հիմքով կացության կարգավիճակ ստանալու համար օտարերկրացին պետք է համապատասխանի հետևյալ պայմաններից որևէ մեկին.

- լինի ՀՀ-ում գրանցված առևտրային կազմակերպության մասնակից, բաժնետեր կամ արժեթղթերի սեփականատեր և այդ կազմակերպության կանոնադրական կապիտալում ներդրած լինի առնվազն 2 000 000 դրամ, կամ ձեռք բերած լինի առնվազն 2 000 000 դրամ արժեքով բաժնետոմսեր կամ արժեթղթեր,
- լինի անհատ ձեռնարկատեր և իր տարբեր արժույթներով հաշիվներին դրամային արտահայտությամբ ունենա առնվազն 1 000 000 դրամ, կամ դիմումը ներկայացնելուն նախորդող 60 օրվա ընթացքում ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ունենա առնվազն 1 000 000 դրամի կամ դրան համարժեք արտարժույթի շրջանառություն։

Իրավաբանական անձի դեպքում կացության կարգավիճակ ստանալու դիմումը ներկայացնելու է կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը՝ էլեկտրոնային միասնական հարթակի միջոցով։ Անհատ ձեռնարկատիրոջ դեպքում դիմումը ներկայացնելու է հենց օտարերկրացին՝ գրանցվելով նույն էլեկտրոնային միասնական հարթակում։

Նույն հիմքով նոր կացության կարգավիճակ տրամադրելու համար անհրաժեշտ կլինի համապատասխան դիմումի առկայությունը, ինչպես նաև էլեկտրոնային միասնական հարթակի միջոցով ստացված տեղեկատվությունը, որը կհաստատի ձեռնարկատիրական գործունեության շարունակականությունը՝ ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգով։ Նման տեղեկատվության բացակայության դեպքում գործունեության շարունակականությունը հնարավոր կլինի հաստատել օտարերկրացու կողմից ներկայացված փաստաթղթերով։

Ձեռնարկատիրական գործունեության հիմքով տրամադրված կացության կարգավիճակը կճանաչվի ուժը կորցրած, եթե՝

- առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում ներդրված կապիտալը դուրս է բերվել կամ դրա չափը դարձել է 1 000 000 դրամից պակաս,
- բաժնետոմսերի կամ արժեթղթերի արժեքը դարձել է 1 000 000 դրամից պակաս,
- կացության կարգավիճակ ստանալուց հետո 180 օրվա ընթացքում Պետական եկամուտների կոմիտեի տվյալների շտեմարանում բացակայում է ձեռնարկատիրական գործունեության արդյունքում հաշվարկված հարկերի վերաբերյալ տեղեկատվությունը։

Միաժամանակ նախատեսվում է, որ կացության կարգավիճակը միայն ներդրված կապիտալը դուրս բերելու պատճառով ուժը կորցրած չի ճանաչվի, եթե՝

- կապիտալը դուրս բերելու պահին օտարերկրացին նույն չափին համարժեք ներդրում ունի ՀՀ տարածքում գործող մեկ այլ առևտրային կազմակերպությունում, կամ
- կապիտալը դուրս բերելուց հետո մեկ ամսվա ընթացքում համապատասխան գումարը ներդնում է ՀՀ տարածքում գործող մեկ այլ առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում։

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի փոփոխություններ

Զուգահեռաբար նախատեսվում են փոփոխություններ նաև «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում։

Մասնավորապես, նախատեսվում է, որ կացության կարգավիճակ ստանալու դիմումը մերժվելու դեպքում դիմումի համար վճարված պետական տուրքն այլևս վերադարձման ենթակա չի լինի։

Փոփոխվելու են նաև կացության կարգավիճակ ստանալու համար սահմանված պետական տուրքերի չափերը. ժամանակավոր կացության կարգավիճակի համար պետական տուրքը կսահմանվի 150,000 ՀՀ դրամ՝ ներկայիս 105,000 ՀՀ դրամի փոխարեն, իսկ մշտական կացության կարգավիճակի համար՝ 250,000 ՀՀ դրամ՝ ներկայիս 140,000 ՀՀ դրամի փոխարեն։

Նախատեսվում է նաև սահմանել 30,000 ՀՀ դրամ պետական տուրք՝ Հայաստանի Հանրապետությունում բնակության օրինականությունը հավաստող վկայական ստանալու համար, որի համար ներկայումս առանձին պետական տուրք սահմանված չէ։

Բացի այդ, 2027 թվականի հունվարի 1-ից աշխատանքային մուտքի վիզայի տրամադրման համար նախատեսվում է սահմանել 15,000 ՀՀ դրամ պետական տուրք։